

ՈՒՐԵՆ ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎԱՏՏԱՅԱՅԵՐԵՆ. ՄԵՐԶԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գաղտնիք չէ, որ հայ ժողովրդի երկփեղկվածությունն ավելի է խորանում լեզվական տարանջատվածության պատճառով: Երկու ժյուղերը միավորելու, մերձեցնելու բազմաթիվ առաջարկներ են եղել, սակայն, ինչպես հայտնի է, առ այսօր վիճակն անփոփոխ է: Բոլորն էլ խոսում են միասնության, ընդհանուր լեզվի օգտին, առաջարկներն էլ սկզբունքորեն քիչ են տարբերվում իրարից, սակայն ...

1897 թ. «Արարատ» հանդեսում Մ. Աբեղյանը, անդրադառնալով այդ հարցին, գրում է, թե չի հավատում, որ «կարելի է այդ (մերձեցումը -Ռ.Ս.) այժմ, առանց որևէ քաղաքական կամ մի ուրիշ նշանավոր հանգամանքի»:¹

Աբեղյանը հարցի լուծումը ակնհայտորեն տեսնում է երկու լեզուները հնարավորին չափ իրար մոտեցնելու մեջ, «այնչափ մոտեցնել, որ երկու կողմից ևս հեշտ ու հասկանալի լինի»:² Դրա համար նա առաջարկում է 9 կետերից բաղկացած մի ծրագիր, որ մասնավորապես հանգում է հետևյալին: Արևմտահայերը պետք է հրաժարվեն գրաբար ձևեր գործածելուց (ընկերությանց, մանկանց), պիտի ընդունեն ում-ով ներգոյականը, ի-ով վերջացող բառերը հոլովեն ու հոլովմամբ, ենթական պարտադիր կերպով պետք է գործածվի որոշիչ հոդով, պիտի հանեն սեռականի և հոդը, անորոշ մը, մ', մըն հոդերի փոխարեն գործածեն մի ձևը (նախադաս և հետադաս) և այլն:

Նշանավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանը 1898 թ. «Արարատ» հանդեսում, պատասխանելով Աբեղյանին, ճիշտ կերպով ցույց է տալիս, որ նա միակողմանի և շատ անարդար գիշումներ է պահանջում արևմտահայերից:

Այնուհետև բանավեճը վերածվում է բանակովի՝ ցուցահանելով ընդդիմադիր կողմերի հավակնությունները:

Այսպես, 1899 թ. Գր. Վանցյանը, հարցը հիմքից կտրելով, գրում է, թե արևելահայ լեզու առհասարակ չկա, ի՞նչ գիշումների մասին կարող է խոսք լինել. «Հռչակավոր Ներսիսյան դպրոցի ուսուցիչներից սկսած մինչև վերջին գործակատարը օտար լեզվով են ծեփախոսում... Այսօր ուտիերեն խոսողների քիվը ավելի շատ է, քան արևելյան հայերեն»:³

Ածառյանը այս հարցը համարում է սպառված՝ Արևմտահայաստանի և Փոքր Ասիայի հայության բնաջնջումով, քանի որ «հայոց մեծամասնությունը հավաքված է այժմ Սովետական Հայաստանում, որ է և կմնա իբրև հայոց բնակավայրը»:⁴

Հետագա իրադարձությունները ցույց տվին, որ այս դատավճիռը թեև իրական հիմքեր ուներ, սակայն խիստ հռետեսական էր և հապճեպ: Սփյուռքի գոյատևումը և հայապահպանման ճիգերի ակնհայտ հաջողությունները ցույց են տալիս, որ նման եզրակացություններ նույնիսկ այսօր խիստ վաղաժամ է անել: Մեր օրերում ևս չեն դադարում վեճերը հայերենի երկու ճյուղերի միավորման կամ մերժեցման շուրջ: Մերթ ընդ մերթ Հայաստանում կամ սփյուռքահայ որևէ գաղթօջախում հայտնվում են նոր դեղատոմսեր առաջարկող «սրտացավներ», որոնց առաջարկները կրկնում են 100 տարի առաջ ասվածները:

Այսպես, 1964թ. Բեյրութում լույս է տեսել մի գրքույկ «Լեզուաշինություն» վերնագրով, որի հեղինակ Հակոբ Թորոսյանը, հավանաբար բարի մոլումներով առաջնորդվելով, դարձյալ առաջարկում է համակարգային հարցերը լուծել փոխադարձ զիջումների միջոցով՝ ընդսմին ցուցաբերելով բացարձակ անտեղյակություն այն հարցերից, որոնց շուրջ հավակնում է դատողություններ անել: Ցույց տալու համար նման մոտեցման անլրջությունը՝ այդ գրքույկից կատարենք մի փոքրիկ մեջբերում:

«Ամենէն ակելի անհեղեղ գտած եմ արեւելահայերենի մէջ գործածութիւնը տրական հոլովին՝ իբրեւ ուղիղ կամ սեռի խնդիր: Այսպես, կ'ըսեն տեսայ տունը, բայց տեսա մարդուն: Ուրեմն ենթական անծ է՝ հայցական հոլովը կը փոխուի տրականի... Այդ արուեստակեալ հոլովածելը, որ յարմարցուած է ռուսերենի հետետեղութեամբ, ընդհանուր գործածություն ունի ներկա արեւելահայերենի մէջ... Մինչդեռ ան պարզապէս խոչընդոտ կամ արգելակ մըն է հայ լեզուին, և ուրիշ ոչինչ...» (Ընդգծումները հեղինակինն են-Ռ.Ս.):⁵

Զըմբռնելով հարցի էությունը և չխորանալով դրա մեջ՝ արեւելահայերենի քերականական ակնհայտ առավելությունը (իրի և անծի առումների տարբերակման հնարավորությունը) ներկայացված է որպես ... անհեթեթություն: Մինչդեռ այս քերականական կարգը արեւելահայերենի էական առանձնահատկություններից է, որը հնարավորություն է տալիս խոսքի մեջ առանց լեզվական լրացուցիչ միջոցների արտահայտել տարբեր նրբիմաստներ, խոսքին տալ ռճական տարբեր երանգներ: Մեր նպատակը չէ այստեղ խորանալ գրքույկի հեղինակի համանման պնդումների մեջ: Ուղղակի մեկ անգամ ևս կուզեինք մշել, որ մախկնում եղած և մինչև այսօր շարունակվող քերականական միասնական համակարգ ստեղծելու փոխզիջումային տարբերակները

դատապարված են անհաջողության: Գլխավոր պատճառը մեկն է. լեզուն մի ուրույն համակարգ է, որի բաղադրիչները փոխադարձ կապի և փոխադարձանավորվածության մեջ են: Չի կարելի փոխել կամ տեղաշարժել մի բան, առանց խաթարելու մյուսը: Հայերենի երկու գրական ճյուղերը իրարից շատ բան ունեն վերցնելու և տալու, և դա գործնականում վաղուց իրականացվում է, ակնհայտ են որոշակի հաջողություններ մասնավորապես բառապաշարային փոխներթափանցումներում:

Այստեղ մենք կփորձենք նշել հայերենի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման հնարավոր ուղիները: Համարահայտ է, որ լեզվական համակարգերի մեջ ամենից կայունը քերականությունն է, իսկ փոփոխությունների նկատմամբ առավել զգայունը բառապաշարն է և մանավանդ՝ իմաստաբանությունը: Ուստի տարբերակների մերձեցումը և փոխհարստացումը արդյունավետ կարող է լինել նախ և առաջ այս ոլորտներում: Հետևաբար անհրաժեշտություն կա ճշգրտելու հայերենի երկու տարբերակների բառապաշարների բնութագրական առանձնահատկությունները, դիտարկելու դրանց փոխլրացման հնարավորությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հայերենի ապագա միասնական բառապաշարի ստեղծման համար:

Այս բնագավառում իրոք արժանագրվել են զգալի նվաճումներ, որոնք ցայսօր չեն ենթարկվել ամբողջական ուսումնասիրության: Բացի այդ որոշ ուսումնասիրողներ (օր. Արտեմ Սարգսյանը) շրջանառության մեջ են դրել նաև գիտականորեն չհիմնավորված փաստեր երկու տարբերակների բառապաշարի քանակական ու որակական կազմի վերաբերյալ, ըստ որի՝ դրանց տարբերությունը կազմում է ընդհանուր հայերեն բառապաշարի սոսկ 3 տոկոսը:⁶

Բառապաշարային ընդհանրությունները նախանշելու համար կատարել ենք զգալի աշխատանք: Մասնավորաբար ճշտել ենք, թե ինչ պետք է հասկանալ արևմտահայերենի բառապաշար ասելով: Այդ ուսումնասիրությունների արդյունքը ամփոփված է Հայաստանում և Սփյուռքում հրատարակված մի շարք հոդվածներում, ինչպես նաև 2000 թ. ԵՊՀ հրատարակչության կողմից լույս տեսած «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղափոսական-բացատրական բառարանում», որի 356 էջերում ամփոփված են շուրջ 16 հազար բառ և դարձվածքային միավոր:

Վերոհիշյալ փաստական հարուստ նյութի մշակումը և դասակարգումը օգնում է բացահայտել բառապաշարային այն շերտերը, որոնք հետագա համագործակցության հիմքեր են տալիս: Մասնավորաբար նկատի ունենք այն բառերը, բառակները և դարձվածքները, որոնք արևելահայերենում գործածվող ձևերի համեմատ ունեն առնվազն մեկ ձևային կամ իմաստային տարբերու-

թյուն: Այսպիսով տրվում է արևմտահայերենի ընդգրկած բառապաշարի գիտական բնութագիրը, որոնք ներկայացվում են հետևյալ խմբերով:

1. Ձուտ արևմտահայերեն բառեր. սրանք գործածական են միայն արևմտահայերենում (աղեկ, աղվոր, խաղք, խռֆած, կոնակ, հոս, պլլվիլ, քով և այլն): Այս կարգի բառերով արևելահայերենի համալրումը հիմնականում զուրկ է հեռանկարից, քանի որ դրանց համարժեքները առկա են արևելահայերենում: Թերևս կարող են ներմուծվել անվանողական արժեք ունեցող որոշ բառեր, ինչպես օր. ներ (տեգորկին), կաղանդ (նոր տարի)...

2. Արևմտահայերենում նախընտրելի գործածություն ունեցող բառեր. թեև սրանք գործածվում են նաև արևելահայերենում, սակայն արևմտահայերենում ավելի հաճախված են (աղտ, գամ, գզրոց, դրացի, խածնել, խարկել, կակուղ, շոգի, շվար, ճերմակ, պաղ, պատուհան, պնակ, տակավին, տրցակ, և այլն): Այս խմբի մեջ մտնող բառերը արդեն իսկ ներկայացնում են որոշակի ընդհանրություն, և որևէ խնդիր չկա դրանց կիրառությունը երկու տարբերակներում ազատորեն իրականացնելու համար:

3. Արևելահայ-արևմտահայ համանուններ. սրանք երկու տարբերակներում ունեն ձևային ընդհանրություն, սակայն արտահայտում են տարբեր իմաստներ կամ նրանց իմաստային դաշտերը մասամբ են համընկնում (գրագետ - գրաճանաչ և գրող, վայրկյան - րոպե և 1/60 րոպե, պահարան - ծրար և կահույքի տեսակ, հով-քամի և զով, քարափ - կիրճ և նավամատույց, ցանկ - գրքի բովանդակություն և ցանկապատ, քանակ - քանակություն և քանոն, կարգել - նշանակել և ամուսնացնել, ընդծովյա - ստորջրյա և սուզանավ, վարիչ - հիմնարկի ղեկավար և վարորդ, և այլն): Այս բառախմբի մեջ մտնող բառերի նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել որոշակի զգուշություն: Արևելահայ բնագրերում նման բառերի գործածությունը արևմտահայ իմաստով ոչ մի կերպ չի արդարացվում, քանի որ առաջացնում է որոշակի իմաստային շփոթություն: Ասել ախոյան և հասկանալ չեմպիոն (հակառակորդի փոխարեն) կամ քանակ՝ քանոն (քանակության փոխարեն), մականուն՝ ազգանուն (ավել անվան փոխարեն), պահարան՝ նամակածրար (կահույքի անվան փոխարեն): Ակնհայտ է, որ հիշյալ բառերի արևմտահայ իմաստներով գործածությունը արևելահայ բնագրում կարող է հանգեցնել բազում թյուրիմացությունների: Այսօր մամուլում, երբեմն էլ գեղարվեստական գրականության մեջ իբր հայրենի երկու տարբերակների մերձեցման փորձ, հիշյալ բառախմբին պատկանող բառերը արևելահայ բնագրերում փորձում են գործածել արևմտահայ իմաստներով: Նման հախուռն և անսկզբունք կիրառությունը արդի լեզվազգացողությամբ սոսկ իմաստային շփոթ կարող է առաջացնել: Օրինակ, ասում են. «Չովհաննես Թումանյանը էն մեծ հայ գրագետն է»՝ չհասկանալով

որ են-ը թուրքերենից փոխառյալ մասնիկ է, որ կազմում է ածականի գերադրական աստիճանը և ոչ մի կապ չունի այն ցուցական դերանվան հետ, իսկ գրագետ ընկալվում է որպես գրաճանաչ, ուստի հիշյալ նախադասությունը արևելահայ բնագրում նշանակում է , որ Թումանյանը այն մեծ հայ գրաճանաչն է... Որպեսզի մեր այս պնդումները չհնչեն մերկապարանոց և փաստագուրկ, բերենք նման մոտեցումների անարդյունավետությունը ցուցահանող և բարեբախտաբար սակավաթիվ փորձերից մի քանի նմուշ: Խոսքը ֆրանսերենից կատարված մի թարգմանության մասին է, ուր թարգմանիչը արևելահայ բնագրում բառերը գործածում է արևմտահայերենում ընդունված իմաստներով:⁷

Այսպես, հոտել բայը արևելահայերենում ունի նեխել, բորբոսնել, փտել, բայց ոչ երբեք բուրել, հոտ գալ իմաստները: «Գիտե՞ս ինչպես է հոտում վառողը, երբ կրակում ես անտառում...» (էջ 398): Ակնհայտ է, որ խոսքը վառողի հոտ գալու մասին է:

Մորուք բառը արևելահայերենում ունի որոշակի կոնկրետ իմաստ. այն ծնոտի վրա աճեցրած մազափունջն է: Արևմտահայերենում, բացի վերոհիշյալից, այս բառն ունի առհասարակ դեմքին աճող մազեր իմաստը: Վեպում թարգմանիչը մորուք բառը գործածել է հենց այս իմաստով, և ստացվել է առավել քան տարօրինակ միտք. »...հիշյալ Ֆոբուան քսան տարուց ի վեր ամեն շաբաթ օր սափրում էր իրենց հոր մորուքը...» (էջ 630):

Պարզ երևում է. որ խոսքը հոր դեմքը կամ երեսը սափրելու, ածիլելու մասին է: Հիշյալ թարգմանության մեջ նման օրինակները բազմաթիվ են:⁸

4. Արևելահայ-արևմտահայ ուղղագրական-հնչյունափոխական տարբերակներ. սրանք պատկերացում են տալիս երկու տարբերակներում առկա հնրյունափոխական և ուղղագրական օրինաչափությունների մասին (անբիծ-ամբիծ, բարդի-բարտի, բորիկ-բոպիկ- գդալ-դգալ, գունդ-գունտ, դժգույն-տժգույն,կենտրոն — կեդրոն, օլիմպիական-ողիմպիական, և այլն):

Այս խմբի մեջ պետք է ընդգրկել նաև արևելահայերենի համեմատ տարբեր լծողություն ունեցող բայերը (թողուլ, նայիլ, բնակիլ, խրատուիլ, խրտչիլ, և այլն):

Սրանց գործածությունը ևս արևելահայ բնագրում պետք է բացառել, քանի որ դարձյալ գործ ունենք յուրաքանչյուր տարբերակին բնորոշ համակարգային երևույթների հետ:

5. Բառակազմական տարբեր կաղապարներով և տարբեր բաղադրիչներով կազմված բառեր. սրանք այն բառերն են, որոնք արտահայտում են նույն հասկացությունը, սակայն լեզվի տարբերակները գերադասում են գործածել բառակազմական տարբեր միջոցներ (բռնցքամարտ-կռվամարտ, գրատուն-գրախանութ, դեղատուն-դեղարան, հեռախոս-հեռաձայն, հեռուստացույց -

հեռատեսիլ, հեռացույց, պատկերասփյուռ, շոգեքարշ-շոգեկառք, ուսուցչանոց-ուսուցչարան, և այլն):

Այս դեպքում արդեն բացվում են համագործակցության ամենալայն հեռանկարներ. միևնույն իմաստի արտահայտման համար տարբեր բառերի առկայությունը մեծապես հարստացնում է լեզուն, հնարավորություն տալով արտահայտելու հոմանշային ամենատարբեր կիրառություններ ու նրբիմաստներ: Բացի այդ, կարծում ենք, այս համագամանքը հնարավորություն կտա հետագայում դրանց մի մասը եզրույթավորել, այսինքն գործածել նոր առաջացած կամ հարակից իմաստներով (օր. հեռախոս-հեռաձայն զույգերից մեկը գործածել ֆաքս իմաստով): Նման հնարավորությունները բազմաթիվ են:

6. Արևելահայերենի փոխառյալ բառի դիմաց արևմտահայերենում հայերեն նորակազմություն. սրանք այն բառերն են, որոնց իմաստների արտահայտման համար արևելահայերենում ավադաբար գործածվել է օտար բառ, իսկ արևմտահայերենը առավել կամ պակաս հաջողությամբ ստեղծել է դրանց հայերեն համարժեքները (ակորդեոն-ձեռնադաշնակ, բանկ-դրամատուն, կոմունիստ-համայնավար, կոմպլեքս-համալիր, կորպուս-մասնաշենք, միկրոֆոն-խոսափող, պրոֆեսիոնալ-արհեստավարժ, պարկետ-մանրահատակ, կոնֆրոնտացիա-առձակատում, ռեալիստ-իրապաշտ, սենսուալիստ-զգայապաշտ, և այլն):

Այս հարցում արևմտահայերենի գերակայությունն ակնհայտ է. հազարավոր հայերեն բառեր, որոնց փոխարեն նախկինում գերադասվում էին օտարաբան ձևերը, այսօր մտել են արևելահայերենի բառապաշարի մեջ և դարձել առօրյա գործածության բառեր, ինչպես օրինակ՝ բանախոս, դրամատուն, մանրահատակ, մասնաշենք, առձակատում, խամաճիկ, խոսնակ, խոսափող, իրապաշտ, և այլն: Գործընթացը այսօր էլ շարունակվում է, և ավելին, արևելահայերենը ևս որդեգրել է այս քաղաքականությունը, և ինքն է բառեր փոխանցում արևմտահայերենին (օր. անտենա բառը թարգմանվում է ալեհավաք և ալեցիր):

Ինչ խոսք, օտար բառերի հայերեն համարժեքները ստեղծելու գործում ամեն ինչ չէ, որ ընդունելի է: Ամեն բան թարգմանելու մարմաջը երբեմն վարկաբեկում է այս գործընթացը առհասարակ՝ հանգեցնելով արտառոց և անբարեհունչ կազմությունների:

7. Գրաբարյան բառեր և բառաձևեր արևմտահայերենում. սրանք արևմտահայերենը պահել է, իսկ արևելահայերենը դրանցից հրաժարվել է (ակադճուն, ծնուցիչ, կիսայրեաց, յօտել, վասնզի, փողփողենեջ, փոշիացեալ, հուսկ բանք և այլ հնաբան ձևեր): Արևելահայերենում նման բառերի գործածությունը ունի ավելի շատ ոճական կիրառություն և կարող է արդարացվել սոսկ գեղարվեստական խոսքում:

Այսպիսով, արևելահայերեն - արևմտահայերեն բառապաշարային համագործակցությունը կարող է իրականացվել բառապաշարի հետևյալ խմբերում.

1. Հայերեն բառեր օտարաբան ձևերի փոխարեն,
2. Միևնույն հասկացության համար հայերեն տարբեր բառեր,
3. Արևմտահայերենում նախընտրելի գործածություն ունեցող բառերի առավել լայն կիրառություն արևելահայերենում:

Արևելահայ լեզվական համակարգում արդյունավետ չի կարելի համարել միայն արևմտահայերենին բնորոշ բառերի գործածությունը, քանի որ դրանք չեն մերվում ընդհանուր համակարգին: Դրանց գործածությունը կարող է արդարացվել սոսկ ռժական նպատակներով (իբրև միջավայրի երանգավորման կամ հերոսների անհատականացման միջոց): Վերջապես անհեռանկար և անընդունելի պետք է համարել արևելահայ-արևմտահայ համանունների գործածությունը մեկը մյուսի փոխարեն, ինչպես նաև՝ ուղղագրական-հնչյունափոխական տարբերակները:

Իսկ արևմտահայերենը կյանքի թելադրանքով արդեն իսկ կողմնորոշվել է, թե արևելահայերենի բառապաշարի որ շերտերից պետք է օգտվի: Դա գիտատեխնիկական եզրաբանությունն է, ինչպես նաև պետականության կարգուսարքին առնչվող բառերը, որոնք արևմտահայերենում բացակայում են արտալեզվական գործոնների պատճառով:

Ծանոթագրություններ

1. Մ. Աբեղյան, նշված հոդվածը, «Արարատ», 1897, էջ 496ա:
2. Նույն տեղը:
3. «Արարատ», 1897, էջ 134:
4. Հր.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե. 1951, էջ 553:
5. Յակոբ Թորոսեան, Լեզուաշինութիւն, Պէտրոս, 1964, էջ 28-29:
6. Արևելահայերեն-արևմտահայերեն բառապաշարային տարբերությունները տոկոսներով արտահայտելու համար նախ անհրաժեշտ է ճշգրտել հայերենի ընդհանուր բառաքանակը, որն ըստ էդ. Աղայանի բառարանի մոտ 150 հազար բառ է կազմում, իսկ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի աշխատակիցների կազմած նոր բառարանը, ինչպես նշում են հեղինակները, ամփոփելու է շուրջ 250 հազար բառ: Հասկանալի է, որ տոկոսներով արտահայտված տարբերությունները յուրաքանչյուր դեպքում կարտահայտվեն տարբեր թվերով: Մեր մոտավոր հաշվարկներով հետագա վերահիշատարակության դեպքում այդ բառացանկը կարող է անցնել 20 հազարից:
7. Ռոժե Մարտեն դյու Գար, Թիբոները, գիրք Ա, Թարգմ. Ա.Ալիքյան, Ե. 1984:
8. Այդ մասին առավել մանրամասն տես Ռ.Կ. Սաքապետոյան, Միևնույն բառաձևերի արտահայտած տարբեր իմաստները արևելահայերենում և արևմտահայերենում, ԲեՅ, 2003, թիվ 1: